

**Ա Ր Չ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն** թիվ 5(17/18)

**Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի խորհրդի 07.03.2018թ.կայացած նիստի**

խորհրդի նիստին մասնակցում էին նրա 36 անդամներից 28-ը :

Օրակարգ`

1. **Հաղորդում ֆակուլտետի մագիստրոսական ավարտական թեզերի կատարման ընթացքի մասին:**  
**Ձեկ` ամբիոնների վարիչներ**
2. **Բակալավրիատի նոր ծրագրերի քննարկում:**  
**Ձեկ` Ծրագրերի պատասխանատուներ**
3. **Ֆակուլտետի ՈւԻՄ նախագահի հաղորդումը ընթացիկ աշխատանքների վերաբերյալ:**
4. **Ընթացիկ հարցեր:**

***Օրակարգի 1-ին հարցի կապակցությամբ.***

**Լսեցին** - ռադիոֆիզիկայի ֆակուլտետի Կիսահաղորդիչների ֆիզիկայի և միկրոէլեկտրոնիկայի ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ֆ.մ.գ.դ. պրոֆեսոր Վ.Մ.Հարությունյանը նշեց, որ ամբիոնում մասնագիտանում են հինգ մագիստրոսներ: Նրանց մագիստրոսական ավարտական թեզերը նորմալ վիճակում են, իսկ ղեկավարների հետ աշխատանքները ակտիվ փուլում են: Ելույթ ունեցավ ԳԲՀ ռադիոֆիզիկայի և հեռահաղորդակցության ամբիոնի դոցենտ, ֆ.մ.գ.թ., Ա.Հ.Մակարյանը: Ամբիոնում մասնագիտանում են 21 մագիստրոսներ. 12-ը` ռադիոֆիզիկա և էլեկտրոնիկա, 9-ը` հեռահաղորդակցություն և ազդանշանների մշակում ուղղություններով: Նրանց ավարտական աշխատանքները նորմալ վիճակում են:

**Որոշեցին**.- հաղորդումն ընդունվեց ի գիտություն:

***Օրակարգի 2-րդ հարցի կապակցությամբ.***

**Լսեցին**- օրակարգի երկրորդ հարցի կապակցությամբ ելույթ ունեցավ ԳԲՀ ռադիոֆիզիկայի և հեռահաղորդակցության ամբիոնի դոցենտ Ա.Ժ.Բաբաջանյանը: Նա հանգամանալից ներկայացրեց «ռադիոֆիզիկա» մասնագիտության բակալավրիատի նոր ծրագիրը` մասնավորապես առարկայական ցանկը, վերջնարդյունքը (քննություն է, թե ստուգարք): Կարևորվեց որոշ առարկաների համար դասախոսություն-լաբորատոր պարապմունքներ ժամաքանակների հարաբերակցության փոփոխությունը, ինչպես նաև այն փաստը, որ հումանիտար առարկաների հիմնական մասը տեղափոխվում է առաջին կուրս: Նշեց նաև, որ ավելացել են համակարգչային դասընթացները: «Էլեկտրոնիկա» մասնագիտության բակալավրիատի ծրագիրը ներկայացնելու համար խոսքը տրվեց

Կիսահաղորդիչների ֆիզիկայի և միկրոէլեկտրոնիկայի ամբիոնի պրոֆեսոր Ֆ.Վ. Գասպարյանին, ով իր ելույթում մանրամասն ներկայացվեց նոր ծրագրի առարկայական ցանկը, և տեղի ունեցած փոփոխությունները: Նշվեց, որ պակասել է մաթեմատիկական առարկաների քանակը, իսկ փոխարենն ավելացել է «Գիտափորձի ավտոմատացում» առարկան: «Հեռահաղորդակցություն և ազդանշանների մշակում» մասնագիտացման բակալավրիատի ծրագիրը ներկայացրեց ԳԲՀ ռադիոֆիզիկայի և հեռահաղորդակցության ամբիոնի դոցենտ Հ.Ս. Հարոյանը: Ներկայացվեց ծրագրի առարկայական ցանկը, փոփոխություններից նշվեց, որ «Հեռահաղորդակցության հիմունքներ» առարկան բաժանվել է երկու մասի, դասավանդվելու է երկու կիսամյակի ընթացքում, և ավելացել է «Ծրագրավորվող էլեկտրոնային սարքեր» առարկան :

**Որոշեցին-** Հաղորդումն ընդունել ի գիտություն:

***Օրակարգի 3-րդ հարցի կապակցությամբ.***

**Լսեցին-** ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախագահ Բ.Ա.Հովհաննիսյանը ներկայացրեց 2017/2018 ուս.տարվա առաջին կիսամյակում կատարված աշխատանքները, ինչպես նաև խոսեց մինչև ուսումնական տարվա ավարտը նախատեսված միջոցառումների մասին, մասնավորաբար մայիսին նախատեսված միջբուհական գիտաժողովի, և Գյումրիի «Ֆոտոն» վարժարան այցելության մասին :

**Արտահայտվեցին-** Ելույթ ունեցան ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Խ.Վ. Ներկարարյանը, ԱՊՏՖ ամբիոնի պրոֆեսոր Գ.Ս. Հաջյանը՝ հորդորելով ուսանողներին լինել ավելի ակտիվ, և՛ ուսումնական պրոցեսում, և՛ կարգապահական հարցերում:

**Որոշեցին-** ուսանողական խորհրդի նախագահ Բ.Ա.Հովհաննիսյանի հաղորդումն ընդունել ի գիտություն:

**Օրակարգը սպառված է:**

**Խորհրդի նախագահ,  
Ֆ.մ.գ.դ. պրոֆեսոր**

**Խ.Վ.Ներկարարյան**

**Գիտքարտուղար**

**Յ. Ա. Շահինյան**